նորէն կուխ կը բացուի մէջերնին :

Կը պատմեն թէ կարապին մէկը թուխս նստած ատենը տեսեր է որ աղուէս մը լողալով իրեն կը մօտենայ . մէկէն 'ի մէկ ցատքեր է վրան , թեւերովը լաւ մը ծեծելէն ետքը՝ ջրին տակը խոթեր է երկար ատեն որ խեղդուի : Կ՚է որ տեսնէ թէ թշնամւոյն չկրնար յաղթել, ձագերը թեւերուն վրայ առած կը փախցընէ :

Այրի կարապը ընտանիէն քիչ մը պզտիկ է. ասոր ալ փետուրները ճերմակ են , բայց թեւերը մոխրագոյն : Հիւսիսային կողմերը օգոստոս ամսուն մէջ ասիկայ որսալու կ'ելլեն . վասն զի ան ատեն փետուրները թափած ըլլալով աւելի դիւրաւ ձեռք կ'իյնայ : Միայն թռչելու ատենը սուր ձայն մը կը հանէ , որ շատ անախորժ չէ . կ'երեւնայ թէ կարապին ձայնին վրայ եղած առասպելը աս վայրի տեսակին համար է :

Սագի ու բադի տեսակներուն վրայ ուրիշ անգամ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ապաւէն տղայոց :

ԵՒՐՈՊԱՑԻՈՑ ուսումնական և քաղաքական յառաջադիմութեանը մեծ պարծանք ու նախանձելի վիճակ է, որ գիտութեանց ու արհեստից հետ մէկտեղ դաստիարակութիւնն ալ ծաղկեցընելու ետեւէ կ'ըլլան , մանաւանդ քսան տարիէ մը 'ի վեր : Աս բանիս յայտնի ապացոյց են ոչ միայն տղոց դաստիարակութեան վրայ եղած գրքերուն շատնալը , հապա նաեւ բոլոր Եւրոպայի ամէն կողմերը տեսակ տեսակ դպրոցներ, ուսումնարաններ, կրթարաններ բացուիլը : Ան դպրոցներուն մէջ ալ մասնաւոր կերպով մը մարդուս աչքին կը զարնեն Ապաւէն տղայոց ըսուած դպրոցները , որոնց վրայ օրագրիս մէջ ուրիշ անգամներ ալ տեղեկութիւն տուինք :

Հոս գրաբառ թարգմանած կը դնենք հիմա ան սրտաշարժ ու իմաստուն ճառը, որ Վենետիկի Ապաւէններուն հոգաբարձուաց ժողովոյն նախագահը , մեծանուն կոմսը Նիկողայոս Փրիուլի , տարեկան հանդիսին մէջ քաղաքիս մեծամեծներուն առջեւ խօսեցաւ անցած տարի յունիսի 24ին :

ՅԵՂԱՆՆԵԼ իմում առաջի ձեր , ո՛վ բարձրապատիւ Արքայազն , վսեմապատիւ Տէր , գերապատիւ կոմս Քաղաքապետ , մեծապատիւ Աւագանի , տեարք և տիրուհիք , յելանել իմում առաջի ձեր զայս չորիցս անգամ պաշտպան Ապաւինի տղայոց 'ի հայրենիս մեր , և յառնուլ յառաջարկութիւն բանիս եթէ կարեւոր իցէ յոտին ունել զայնոսիկ 'ի Վենետիկ , երկնչիմ մի՛ գուցէ զեղծանիցիմ ինչ ներողամիտ քաղցրութեամբդ ձերով, զորոյ յայլ նուագս առեալ եմ զքաղցր փորձ . և միանգամայն մի՛ գուցէ ստուերածս ինչ ածից առատաձեռն բարերարութեանդ ձերոյ , որով ցայսօր բարգաւաճ կացուցիք զայսպիսի գովելի սահմանադրութիւն : Այլ քանզի հիմն հաստատութեան բանից իմոց է նոյն ինքն ձերոյին բարերարութիւն , ապա ընդհետ գայ զի խորհուրդք մտաց իմոց թարգման իցեն ցանկութեանց ձերոց , և բանք իմ ոչ այլ ինչ՝ բայց եթէ մեծաձայնագոյն նուէր երախտագիտութեան բարերարութեանդ ձերոյ : Արդ 'ի լռութիւն չափաւորութեանդ՝ թոյլ տուք զի տառապեալ ծնողք մատուսցեն ձեզ օրհնութիւնս և գովութիւնս երախտագէտ սրտից ընդ անարուեստ շրթունս իմ , և շնորհեցէք ինձ զլսողութիւն ձեր 'ի տեսիլ յաղթանակի առատաձեռնութեան ձերոյ որ խռնեալ կայ շուրջանակի :

Օ՜ պահպանութիւն Ապաւինի տղայոց 'ի Վենետիկ ամենայն իրօք

պահանջեն խնամք առատաձեռնեալք 'ի քաղաքական և յեկեղեցական իշխանութեանց, պաշտպանութի՝ փոխարքային մերոյ և Կայսեր, առատաձեռն տուչութիք քաղաքացեաց, օգտակարութիւնք ցայս վայր շահեցեալք և որք անխաբ ակնկալիք են յապագայս։

Խնամք և փոյթ ցուցեալ 'ի քաղաքական և յեկեղեցական իշխանութեանց յայտնի են 'ի Յայտարարութեանցն 'ի մեծոյ յղելոց 'ի ժողովխնամակալուաց Պաւլինի տղայոց 'ի Վենետիկ։

Պրքունի տեսչութիւն Պնդորրութեան քաղաքիս քաջալերեր զժողովն արիանալ 'ի ջանս խնամարկելոյ զայս բարեպարիշտ սահմանադրութի. քանզի ասէ. "Այդ գործ անյերկուանալի օգտակարութիւնս առեալ բերցէ ընտիր վարուց, աստուածպաշտութեան և քաղաքական միաբանութեան"։

Պրքունի տեսչութիւն Հսկողութեան քաղաքիս՝ ամոքական բանիւք 'ի սկզբան անդ զսահմանադրութիւնս կոչեր "Աստուածպաշտական և օգտակար". և յաւելոյր եթէ բարգաւաճանք նորին ածցեն "Պարծանս և վայելչութիւն հայրենեաց"։

Պա և նոյն ինքն Պետութիւնն բարձրապատիւ յայլում Յայտարարութեան քաջալերեալ զժողովն կարի անարգամեծար բանիւք, "Մենակարևոր" կոչեր զայս բազմերանեան սահմանադրութիւն Պաւլինի տըղայոց։

Աստանօր թոյլ տուր ինձ, վսեմապատիւ Տէր, զի յիշեցից զմեծայարգ նամակն ուրախակցութեան, որով խրախուսեալ զաշնուականխնամն ժողովոյն, ասէիր թէ "Այդ խնամք 'ի ստորին դասէ ռամկին յարուցէ ծընունդ նոր առաւել աստուածապաշտ, առաւել ճարտար, և առաւել բարեկեցիկ". և յաւելուիր եթէ "Լովին հոգւով եռանդեան ցանկորդեալ 'ի գեղեցիկ ասպարիզին, չիք տեղի երկբայութեան եթէ քաղեսցին միշտ կարևորագոյն օգտակարութիւնք"։ առ որ և քո բուռն իղձք անկեղծաւորք էին։ Այս իբրու թէ նուազ իցեն այսպիսի քաջալերական բանք, անհնարին է ինձ ջածել յուշ, զի միւսանգամ 'ի մեծոյ վառէիր այլով նամակաւ զեռանդն ժողովոյն, և ասէիր թէ "Լովին եռանդեամբ հաստատեսցի և աճեսցէ միշտ գործդ, որ այդչափ օգտակար է այժմու և ապագայ ծննդոց ստորին դասու ռամկին"։ Այս ամենայն ոչ շատ համարեցաւ առաւելութի՝ քոյոյ եռանդագին աստուածպաշտութեան, այլ յաւելեր թէ "Գործակցութիւն քո առ այս համարիցիս մի 'ի կարևորագոյն պարտուց" աստուածային քոյոյ սպասաւորութեան, և ցանկայիր "Զի ազդողագոյն ևս իցէ քո այդ սպասաւորութիւն 'ի պատրաստել ըստ կարի զպէտս գործոյն բարեպաշտութե"։

Ընդ այսոսիկ անյերկուանալի և խրախուսական հաւաստիս գովութե և քաջալերութեան սիրեմ յիշել և զայցելութիւնսն մեծարոյ արանց, որով յայսմ ամի պատուեցին զՊաւէնս տղայոց, զվսեմապատիւ Պատրիարգն ասեմ և զարքայազուն Փոխարքայն՝ որ այցելութեան իւրոյ կընիք եդ զհրովարտակն երեքտասանեորդի աւուր ամսեանն ապրիլի. և հրովարտակդ այդ այնչափ առատաձեռն է գթովք, մինչ զի ժողով հոգաբարձուացն հարկ համարի յիշատակել զայն. այլ 'ի յառաջն բերել զբանսն թերևս ոչ զերծ լիներ 'ի ստգտանաց ամբարտաւանութեան։

Այլ ոչ, չէ ինձ արժան լռել յաւուրս հանդիսի զայն, որ թէ հաւատարիմ առնէ զբանս իմ, ելանէ և 'ի գովութիւն մեծախոհ և բարերար սրտի բարձրապատիւ Փոխարքային, որ ամենայն ձգամբք աշխատ լինի 'ի բարգաւաճանս այսր ժողովրդեան։

Մտանէ Փոխարքայն 'ի մէջ տառապանաց և գրգռեկաց աղքատութեան, որ ժողովեալ է 'ի Տուն Ճարտարութեան մերոց հայրենեաց, զի երբեմն

մնարան էր կուսանաց 'ի ճոխ ազգատոհմէ նուիրելոց առ Աստուած ։ Զօր համապազ հարիւրաւորք դիմեն անդր տառապեալ ծնողաց՝ կալեալ զձեռանէ տխեղծ զաւակացն, զի շահեսցին աշխատութեամբ փոքր մի հացիկ անձանց և անմեղ և դժբաղդ տղայոց իւրեանց ։ Առաջնորդութի՜ վերակացուի տեղւոյն շրջի արքայազն իշխանն ընդ հին և ընդ նոր դահլիճսն, զննէ զգործարանս, քննէ զձեռագործս, խրախոյս տայ աշխատութեանց ։ Այլ միտք նորա և սիրտ գըրաւեալ ամենեւին յԱպաւէնս տղայոց, որոց յայց ելեալ էր սակաւիկ մի յառաջ, և տեսեալ 'ի նոսա զորղայական աղքատութի՜ն կրթեալ մըտավարժ և պարենաւորեալ, տեսանէ և անդէն մանրիկ մանկտի յոյժ՝ յանձնեալ տգիտութեան ուրումն տառապելոյ պահապանի, որով և զուրկ յանստերիւր ուսմանէ աստուածպաշտութե՜ և բարեկրօն վարուց, կամ թէ ասել յերկրորդ կաթանէ, զոր պարտ է ջամբել տղայոց զօր ամենայն ։ «Աւա՜ղ մանկտւոյն», դարձեալ առ վերակացուն աղաղակեաց արքայազնն ։ Նորա ճարտարմտութե՜ 'ի միտ առեալ եթէ յոր վայր դիտէին ակնարկութիւնք մտաց արքայազնին, աղաչէ զի և 'ի նմին տեղւոջ հաստատեսցի նոր Ապաւէն տըղայոց ։ Ընդ հաւանութիւն իշխանին և ընդ հրովարտակ Փոխարքային որ հրաման տայր զկատարումն գործոյն՝ ժամք ևեթ անցին ։ Այս և ժողովն քաղաքական պատիւ մատուցեալ մըտաց արքայազն իշխանին, ջանից վերակացուին, և անձին իսկ գլխովին, սահմանէր և զարծաթն կարևոր 'ի գործ անդր ։ Յառաջնում աւուր ամսեանն յորում եմք՝ բացաւ Ապաւէնն, և անդ աղածրի մանկտին տառապեալ միօրինակ աճեսցէ աշխատութեան, վաստակոց և առաքինութեան ։ Օրհնեսցին, ո՛վ տեարք, իշխանք ժողովրդոց, որ այսպիսի սիրով 'ի վերայ հասանեն պիտոյից իշխեցելոցն 'ի նոցանէ ։ Օրհնեսցի և ժողովուրդն, որ բարգաւաճանաց և օգտի քաղաքական միաբանութեան ակնունի 'ի բարեկարգութենէ վարուց դասու ռամկին ։

Ապա մի զարմանայք, եթէ ժողով խնամակալուաց, որոց նախագահութեամբն պատուեալ եմ, և մեծարեալ յազնուական առատամտութենէ նոցա, խրախուսեսցէ և իբրու ինձ ձկտիցի առաջի ամենեցուն մեծապատիւ ընծայեցուցանել և մեծարգոյ կացուցանել զայս գործ բարեպաշտիկ, և ամենայն ջանիւք աշխատ լիցի ժաման լինել յայն կենցաղօգուտ կէտ նպատակի. որ և կրկին ևս քաջալերեցաւ 'ի գործն՝ իբրև հաճեցան գերագոյն Պետք մեր թոյլ տալ զի անուանք նոցա «Պերճասցին 'ի գլուխ անուանց բարերարաց գործոյս» ։

Յայս պաշտպանութիւն, յայս խընամս, յայս շնորհ մեծապարգև յաւելան և քաղաքացի տուրք և ազնուախոհ առատաձեռնութիւն Հասարակաց բարերարութեան, որովք պաճարեալ զտարեւոր ծախս գործոյս աստուածպաշտութեան, և նորածին ժառանգութիւն նորին ոչ աննշան բարգաւաճանօք աճեաց ։

Զտուրս բարերարութեան ձերոյ ըստ իւրաքանչիւր գլխոց յայտնի և բացայայտ պարզաբանեաց Ատենադպիրս 'ի հաշուին զոր ետ ձեզ ։ Ո՜ այնորիկ ինձ չէ հարկ խօսս առնել զայնմանէ. զայս միայն չկարեմ լռել, թէ այնու զի յանցելում որպէս և 'ի սմին ամի յաճախեաց օգնականութի՜ ձեր առ հաւասարութե՜ անցելոց ամաց՝ ցուցանէք թէ հաճեալ էք ընդ գործն, և ցանկայք զի պահպանեսցին և բարգաւաճեսցին նոր այս սահմանադրութիւնք ։ Եւ թուի թէ իրացս հաւաստիք, որոց վկայութիւն ահա 'ի ձեռին ձերում է, չունիցին ինչ պէտս ապացուցից և հաստատութեան ։ Որ ոչ կամի զի յաջողեսցի գործ ինչ, ոչ հնարս ինչ յանձն առ-

նու 'ի կատարումն նորին ։ Իսկ դուք ընդ հակառակն առատաձեռնեցէք զհասսն, և տուրք ձեռայ ձերոց յայտնի հաւաստիք են թէ ցանկայք պահել և աճեցուցանել զգործ ձեր ։

Այլ եթէ պարտք իցեն ժողովոյ խընամակալուաց 'ի հանդէս հրապարակիս շնորհս խոստովանել մեծի բարերարութեանս, նոյնպէս պարտք մեր են պաշտպան կալ գործոյ ձերոյ յերեսաց տկար յարձակմանց, զոր ժլատ և անզգայ անձնասիրութիւն իշխէ մղել նմին հակառակ ։

Գիտասցեն ամենեքեան և առ հասարակ ծանիցեն, զի ուշնպատակի է սահմանադրութեան Սպաւինի տղայոց բարեկարգել զվարս ռամկին ։ Այս գովելի կէտ նպատակի, այս բարձրադիտակ խորհուրդ յաւուրս յայսմիկ, ո՛վ տեարք իմ, պարապումն է խորագնին մտաց, աւագամեծար արանց, հոյակապ մարդկան պետութեանց։ Այլ եթէ շատահանճար միտք հազարապետի անգղիական պետութեանն Տեառնն Պրուկամայ բացածանուցանէր ծերակուտին իւրոյ եթէ քան զբանտս և քան զկարգս ապաշխարողականս զնդանից ազդողագոյն է բարեկարգել զվարս ռամկին՝ 'ի նուազեցուցանել զթիւ յանցաւորութեանց, և ես զհետս կոխելով զմեծահանճար զառնն եւրոպականի, ժրտիմ ուխտիւք խնդրել՝ զի ծանիցեն ամենայն պետք ազգաց և ժողովրդոց, եթէ և նոցին իսկ կարի օգտակար իցէ ժողովուրդ վարուքն բարեկարգ ։ Ժողովուրդ բարեկարգ խրատեալ յերկիւղածութենէ երդմանն, ոչ երբէք դարձուսցէ զլանջսն ընդդէմ կալ գահոյիցն՝ որում խոստացաւ լինել հնազանդ։ Այլ լանջք բարեկարգ ժողովրդեան կանգնեսցին ընդդէմ թշնամեաց ամբարտակ անյաղթելի ևս քան զպարիսպսն՝ որովք ամրանայ կայսրն Չենաց 'ի մէջ բազմամբոխ ժողովրդոց պետութեան իւրոյ։ Րացէք զէջս պատմութեան ։ Հաւասիկ ձեզ 'ի Սպարտա ժողովուրդ անընտգիւտ բարոյիւք ։ Ո՛րչափ արիութիւն յազգ մի ընդ թուով սահմանեալ։ Կամիցի՞ք տարացոյցս։ Լէոնիդաս ընդ երեքարիւրոց իւրոց ։

Այլ ո՞ւր, ո՞ւր եռանդն բանի մղէ զիս արտուղի ։ Ընդէ՞ր իցէ տհաս պըտուղս խնդրել, եթէ քաղեցան և քաղին միշտ ժամանեալքն ։

Պարտ էր ինձ ասել աստանօր, ո՛վ տեարք իմ, զօճանսն՝ զոր տեսաք յապաստանարանաց աստի տխեղծ հասակին ։ Երկայն լինէր ապաքէն շար անուանց պատանեկացն, զոր պարտ էր ինձ արդեօք 'ի համար արկանել, որք յայսմ ամի լցեալ զամ հասակի իւրեանց՝ անցին 'ի սկզբնական դպրոցս, կամ յառանձնական գործարանս։ Մարթէի ապաքէն ասել եթէ զիա՞րդ վարժեալք 'ի կրթութիւնսն ընկալեալս եթէ մաքրութեամբ հանդերձիցն և անձին, եթէ հնազանդութեամբ հրահանգացն, և եթէ երագ յառաջադիմութե՛ 'ի ծանօթութիւնս քերականական սկզբանց, գերազանցեն քան զաշակերտակիցսն՝ որ յանհրահանգ ռամկէն ։ Մարթէի ապաքէն ասել, այլ մանաւանդ ասիցեն ձեզ նոքին ձեռագէտք՝ որ ցանկան ժառանգել զաշակերտս մեր, և գրաւս իմն արկանեն յառաջ քան զելս նոցա յՍպաւինաց մերոց ։ Թող ասասցեն ձեզ ծնողք նոցա. յորոց ոմն յաւելուցու եթէ շահիկն՝ զոր օր ըստ օրէ 'ի ձեռս բերէ մանուկն իւր հազիւ տասնամեայ, բաւական յապրուստ նորին, է զի դիւրացուցանէ իսկ զապրուստ կրսերագոյն եղբարց ։ Հաւասիկ ձեզ, ո՛վ տեարք իմ, ահաւասիկ երախայրիք նորաբոյս տնկոցն մշակելոց 'ի պարտիզի աստ, ակնկալութիւն ապագայ ծննդոց։

Սակայն ոչ կամիմ յիշատակել զօգտութիւնս Սպաւինաց տղայոց, եթէ ըստ մասին պատուական հացի հրահանգացն աստուածպաշտութեան, զոր բեկանեն և մատակարարեն մանկանց զոր ամենայն. եթէ ըստ սկզբանց երկիւղած վարուց, զոր տնկեն

'ի սիրտ նոցա և տպաւորեն 'ի միտսն . եթէ ըստ զարգանալոյ մտաւորական կարողութեանցն, որոց առաջնորդեն՝ ուսուցանելով նոցա զպարտս մարդոյ առ Աստուած, առ իշխանն, առ հայրենիս : Բայց ես, թէ ոչ վրիպեմ, տեարք իմ, մեծամեծ ակնկալութիւս նկատեմ 'ի պատսպարանքս յայսոսիկ 'ի կրթութէ անդ վաստակոց, որով և յոյս շքեղազարդելոյ զքաղաք մեր ճարտար ձեռագիտօք : Ո՞ անկարեկիր աչօք հայիցի 'ի ճոխութիւն մեծահարուստ՝ որ գնայ և լիացուցանէ զգանձ օտար աշխարհաց 'ի գինս հիւր ձեռագործաց, որոց բաղում այն է՝ զի սկզբնականնիւթք բերք են երկրիս մերոյ, և վաճառք մերոց նաւահանգստից : Հապա մի՛ ևս թմբրեալ մնասցէ ազգայինն պերճութիւն, և յիշեսցեն ամենեքին զի այս կամաւոր և ամօթապարտ հարկ ելանէ 'ի ճարտարագործն Սենետկոյ : Ի Սենետկոյ աստի, յորում 'ի լաւագոյն աւուրս սակաւիկ մի մոխիր սպանիական ջեռուցեալ 'ի բովս հրաբորբոքն Մուրանի և 'ի բիւրաւոր այլատարազ ձևս կերպարանեալ փոխանակէր ընդ ոսկւոյ հեռաւոր ազգաց : Ի Սենետկոյ աստի, առ որ դիմէին զօրաւորագոյն պետութիւք և հոսէին զգանձս իւրեանց 'ի ստացումն մանուածոց և ոսկեթել կերպասուց, որովք պանծային պճնել զարքունիս իւրեանց : Ի Սենետկոյ աստի, յորում սակաւ թելիւք բազմորուեստս խառնելովք և անկելովք պարզէին օդային այն ցանցք, որով գեղք օտար աշխարհաց ծածկէին զշնորհս իւրեանց, կամ 'ի հանգոյցս ամփոփէին զխոպոպիս :

Թող տուք ինձ աստանօր, ո՛վ տեարք, զի 'ի հայրենի փառաց աստի առից նոր հաւաստիս ցուցանել ըզպատշաճութիւն և զկարևորութիւն պահպանութեան Ապաւինի տղայոց :

Այլ ո՞ք իցեն տղայքս այսոքիկ որք անդորր և համեստ պսակ բոլորեալ զձեօք՝ դըրդեն զաղիս ձեր : Չիցե՞ն թոռունք ձեռագիտացն, յորոց ձեռաց ելին սքանչելի գործածքն, որովք ճոխացեալ առ և տուր մեր՝ հրաշակերտեցաւ այս քաղաք նորասքանչ : Չիցե՞ն թոռունք գործաւորացն, որ հռովմէական համարձակութեամբ և գանձու Սենետկոյ ամբարձին վիմարդեան ամբարտակս, որոց ընդդէմ խորտակի ցասումն ծովու որպէս զկաթիլ անձրևոյ 'ի վերայ անշարժ ապառաժի : Ո՞չ ապաքէն կանգնեցան 'ի բրտացեալ ձեռաց նախահարց սոցա և ոռոգեցան 'ի քրտանէ ճակատու նոցա պալատքն, տաճարքն, հրապարակն՝ գոհար անզուգական, տեսիլ և տեսող անդորրաւէտ համախմբութեանց ժողովրդեան, բարձրաքարոզ երաշխաւոր ամոք բարոյից ժողովրդեանն Սենետկոյ :

Պա՞րտ իցէ ինձ, ո՛վ քաղաքակիցք իմ, յիշեցուցանել ձեզ եթէ արեամբ նախահարց նոցա շահեցայք զփառսն, որով պերճացաւ Տանտոլոյ 'ի վերայ բարձրապարիսպ աշտարակացն Կոստանդնուպոլսոյ . եթէ վիրօք նախնեաց նոցա զյաղթանակսն, զոր 'ի սեմոց Աթենայ մինչև 'ի հանգրուանս նաւուց մերոց ած Մաւրոչենոյ . եթէ անթիւ սպանութեամբ հաւուց նոցա զգեղեցկայանդուգն քաջութիւնն, որով Փիզանի և Զենոյ յակճիռս կացուցեալ զհամօրէն Եւրոպէ՝ դարձուցին հայրենեաց զվտանգեալն նորին ազատութիւն :

Ահաւասիկ, ո՛վ տեարք, վասն այսր օգտակարագոյն դիտաւորութեան, վասն այսպիսեաց ոմանց առատ ձեռք ձեր մատուցին ժողովլոյն խնամակալուաց զընծայսն գթութեան : Մի՛ զայրանայցէք եթէ զգումարն երկերիւր եօթանասուն և ինն հազար եօթն հարիւր և իննսուն աւստրիական լիրայից և եօթնևտասն հարիւրորդաց, զոր 'ի պէտս նուիրական գործոյս առատաձեռնեցէք 'ի սկզբնաւորութէ անտի գեղեցիկ սահմանադրութես մինչև ցերկեան կշիռ գումարին, կոչիցեմ այսու նուաստ անուամբ : Գիտեմ քաջ եթէ պարգևեաց զայս գը-

թութիւն վենետկեցի, որ 'ի սուղ շրջանի սակաւ ամաց, և Ճշգրիտ 'ի 1836 ամէն մինչև ցայսօր, առաւել քան զմիլիոն մի լիրայից ծախեաց 'ի նորոգութիւն հարիւր և տասն հոյակապ տաճարաց բացելոց աստուածպաշտութեան հարց մերոց։ Գիտեմ քաջ, եթէ գթութիւն վենետկեցի 'ի ձեռն ժողովոյն Հասարակաց բարերարութեան և անկելանոցաց, որովք Ճոխացեալ է այս վաղեմի բոյն գթութեան, ազատէ 'ի վտանգէ զորբն լքեալ, օգնական լինի և մխիթարէ զարտասուս տառապեալ այրեաց, ժողովէ զտառապանս ծանրացելոյ հասակին, դարմանէ զախտս վշտացելոց հիւանդաց, և ձեռն կարկառէ առժամանակեայ կարօտութեամբ գործաւորին։ Հուսկ յետոյ գիտեմ քաջ, զի գթութիւն վենետկեցի ոչ սպասէ զի պէտք յանդիման լիցին նմա, այլ ինքն 'ի խնդիր ելանէ պիտոյից։ Այո, գիտեմ զայս ամենայն. այլ և զայն գիտեմ, ո՛վ տեարք, զի գումարն ժառանգութեամբ նորոյ սահմանադրութեանն, զորոյ զհաշիւ ունիք ապաքէն 'ի ձեռին, առաջին 'ի վիմայն է 'ի կանգնումն շինուածոյ բարեպաշտիկ գործոյ Այպաւինի տղայոց։ Խրախոյս առցէ, հա՛պա, առցէ խրախոյս առատաձեռնութիւն ձեր, և առաջնոյն փութով զհետ եկեսցէ երկրորդն և երրորդ վէմ, և մի՛ զկայ առնուցուք մինչև ժամանեսցէ շինուածն 'ի բարձր վերնայարկն։ Եւ հնա՞ր իցէ, զի 'ի քաղաքին՝ որոյ հրաչակեալ է համբաւ անսպառելի բարերարութեանն, եղիցի ոք 'ի Ճոխ և 'ի բարեկեցիկ մարդկանէ՝ որ հրաժարեսցի զուգաւորել ընդ միաբանութեան բարերարաց բարեպաշտ այսր նորոյ սահմանադրութեան։ Եւ իցէ՞ հնար, զի մի միայն Վենետկեցի կափուսցէ զաչսն 'ի գործոՎալից տեսլենէ աղքատ անմեղութեան, որ շուրջ բոլորեալ է զձեօք, և խնուցու զականջսն 'ի հրաւէր ժողովոյ խնամակալուցաց, որ խնդրէ տուրս ինչ՝ զի կազմեսցէ այնու Գրաւ ինչ բախտի, որպէս զի աՃեցուսցէ զժառանգութիւն բարեպաշտ սահմանադրութեանն։ Այլ, ոչ մարթիմ, և ոչ կամիմ յերկուանալ ընդ այն, ո՛վ տեարք։

Եթէ արծաթ ձեր նորոգեաց զայն ամենայն նիւթեղէն տաճարս հոյակապս, արծաթ ձեր՝ զոր յանձնիցէք ժողովոյն խնամակալուցաց, կանգնեսցէ այնչափ տաճարս բանաւորս'ի սիրտ մատաղ մանկտւոյն, որչափ առատաձեռնութիւն ձեր ժողովեսցէ մանկունս յԱպաւինն տղայոց։ Ի բանաւոր տաճարաց աստի օր ըստ օրէ սլանայցեն առ Աստուած եռանդագին աղօթք, և իջուցանիցեն 'ի վերայ բարերարաց իւրեանց օրհնութիւնս երկնաւորս։ Ընդ այն մի՛ յերկուանայք, ո՛վ տեարք. 'ի ձայն անմեղութեան զեղուցուն օրհնութիւնք յերկնից 'ի բարձանց։ Այո՛, մի՛ երկմտեսջիք։

Եւ դու ընդ իմ զնոյն ասա, ո՛վ վսեմապատիւ ծիրանաւոր, և քարոզեա նոցա թէ պատկեր և ողջակէզ սիրոյն՝ որ աստուածային շրթամբքն հրաւիրէ զմանկունս գալ առ ինքն, նոյն ինքն բարձրաձայն երաշխաւորէ, թէ երանի՛ որ խորհի զաղքատն և զտնանկն, զի յաւուր չարի պաշտպանեսցի և փրկեսցի։ Պարոզեա նոցա զհրաշալի խոստումն և զանխաբ միսիթարութիւնն, թէ ոչ քնաւ ամայի մնասցէ յօգնականութենէ 'ի մահիճս ցաւոց իւրոց՝ որ զվիշտս և զտառապանս ցաւոց աղքատին վերացուցանէ։

Եւ ահաւասիկ պատկեր սքանչելի և հրաշագործ զօդոյն միաբանութեան, զոր կապեն ինքնին մատունք վերին տեսչութեան. և այսու վախճան տամ բանիս։ Աստ աղքատութիւն, որ օգնականութիւն պաղատի, անդ գթութիւն, որ զայն մատակարարէ. աստ շնորհակալիք երախտագիտութեան, անդ ուրախութիւն ազնուախոհ մտաց։ Արկիր զուգակապեալ այսու սքանչելարուեստ յօգիւ՝ յանդիման ցուցա-

նէ երկնից զլայնատարած ասպարէզ մարդկային աղխտից . երկինք ունկընդիր երկրի՝ ոռոգանեն զերկիր առատ ցօղովք պարգևաց : Տեսարան հիացման արժանաւոր օր ըստ օրեայ փոխառութեան բարւոյ և չարի . անազդելի հոլովումն ցաւոց և ակնկալութեանց , անլուծանելի կապ ընդ Աստուած և ընդ մարդ :

Արդ դուք մանկունք , որ շուրջ ըզձեօք տեսանէք՝ ոչ գիտեմ զի՞նչ անուանեցից զսոսա , պաշտպա՞նս ձեզ՝ թէ մանաւանդ հարս , վախճան տուք արդ երկայն լռութեան ձերոյ : Ամբարձէք զանմեղ աչս ձեր 'ի վեր , տարածեցէք զբազկիկս ձեր աղօթականս , և արձակեցէք զլեզու յերգ երախտագիտութեան և կարդացէք 'ի վերայ նոցա և յիմ վերայ զօրհնութի երկնից :

ԵՐԳ ՄԱՆԿԱՆՑՆ

Որպէս ըզմեզ և դու Տէր մեր
Մանուկ մատաղ յերկրի եղեր .
Ի պաշտպանողըն մերոյին
Առատազեղ տուրք քո հեղցին :
Անխոնջ սիրով սիրտք պատարուն
Տացեն կատար սրբոյ գործոյն :
Որոց ձըրիցն երկնատեղաց
Արժանի են նոքա , Աստուած :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Խօսակցութիւն աշխատանքի բաժանման վրայ :

ԱՐ . — Նախընթաց խօսակցութիւններով որ ըրինք՝ հասկըցայ թէ հանգիստ կեանք անցընելու համար չափաւոր հարստութիւն պէտք է , հարստութիւն ունենալու համար աշխատանք պէտք է , լաւ աշխատելու համար ալ կատարեալ ապահովութի հարկաւոր է : Մէկ խօսքով , հասկըցայ թէ հարստութեան աղբիւրը աշխատանքն է . հիմա կ'ուզէի իմանալ թէ ի՞նչ ճար ընելու է որ քիչ աշխատանքով շատ հարստութիւն դիզուի :

ԴԱՍՏ . — Ով որ մէկ բան մը ստէպ կ'ընէ , անիկայ լաւ ալ կ'ընէ նոյն բանը . և ով որ շարունակ կ'ընէ՝ շուտ ալ կ'ընէ . երբոր մէկ գործքին այլևայլ կտորները մէկէն կատարուելու ըլլան , բոլոր գործքն ալ շուտ կը լմըննայ : Դնենք թէ պարտէզ մը ունիս որ կ'ուզես շուտ մը յօտել , մաքրել , ու ջրել . թէ որ աս գործողութիւնները բոլորն ալ դուն ընես՝ հարկաւ շատ կը յոգնիս և ուշ կը լմընցընես . իսկ թէ որ երկու հոգի ալ քեզի օգնական առնես , անոնց մէկը կը յօտէ , մէկալը կը մաքրէ , դուն ալ ջուր կուտաս . ասանկով պարտէզը քիչ աշխատանքով կը հոգացուի . և ահա ասոր կ'ըսեն բաժանումն աշխատութեան , որ քաղաքական տնտեսութե մէջ շատ մեծ ու հարկաւոր բան է : Ուրիշ օրինակ . ինծի պէս՝ քեզի պէս , որ արհեստը չենք գիտեր , տասը հոգի մէկտեղ , օրը մէկ գնդասեղ՝ մը գուցէ հազիւ կրնանք շինել , ան ալ չեմ գիտեր շէնքով բան մը կ'ըլլա՞յ թէ չէ . իսկ աշխատանքը բաժնելով ու զանազան գործիքներով տասը հոգի մէկ օրուան մէջ 40,000 գնդասեղ կը շինեն :

ԱՐ . — Ի՞նչպէս կրնայ ըլլալ ատ բանդ . մարդ գլուխ մէկ օրուան մէջ 4800 գնդասեղ շինել ի՞նչ ըսել է :

ԴԱՍՏ . — Հա՛պա . և աւելի ալ կրնար շինել ամէն մէկը՝ թէ որ աշխատանքը տասնին տեղը՝ տասնըհինգ հոգւոյ վրայ բաժնուած ըլլար : Բայց գիտե՞ս թէ վարժութիւնն ալ որչափ պտղաբեր կ'ընէ մարդուս աշխատութիւնը : Ասոր ալ օրինակ մը տամ : Դարբին մը որ ամենևին գամ շինած չըլլայ , օրը երկու իրեք հարիւր գամ հազիւ կրնայ շինել , անոնք ալ ծուռումուռ բաներ կ'ըլլան . երբեմն երբեմն գամ շինող դարբինը՝ ութը հարիւր մը կրնայ շինել . իսկ մէկ դարբին մը որ միշտ գամ շինելու հետ է՝ օրը երկու հազար իրեք հարիւր գամ

1 Թօփլու :